

**ՊԼ ՄՎՐ**      Ոչ է պարտ ժողովրդականաց ի սեղանն հա-  
ղորդել, և ոչ արանց ի բէմ ելանել:

**Քանդրեայ**      Ոք երկմտին և խորշին յերիցուէ՛ որ ամուս-  
դ յիսդ նացեալ իցէ, որպէս թէ՛ ոչ իցէ արժան ի նոցանէ  
օրէնս առնուլ նզովեալ եղիցի:

**Աւթանասի**      Հարց.—Կի՞ թէ լինիցի ընդ առն իւրում ի  
և շար գիշերին և լինիցին ժողովը յաւուրն, թէ ա'րժան է  
նոցա հաղորդել՝ թէ ոչ:

**Պատաս.** — Ոչ է պարտ առ ժամայն առաքելոյ  
գոչելոյն մի զրկէք զմիմեանս, բայց եթէ ինչ ի միա-  
բանութենէ, առ ժամանակ առելով՝ ի սովորութե-  
նէն ասէ. զի աղօթիցն պարապեսցին. դարձեալ ի  
նոյն դարձին, զի մի փորձեսցէ զնոսա սատանայ՝  
վասն անխառնութեան նոցա:

**ՃՂ ՌԻՐ**      Հարց.—Թէ ոք յանցաւոր է ի բազում մեղս,  
և քահանայք աղածնն. զի դարձցի յապաշխարու-  
թիւն, և նա ստունդանէ և արհամարհէ զնոսա, թէ  
յանկարծակի անկանի յախտ մահուն և խնդրէ ո-  
րէնս ի ժամ մահուն, պարտ է տալ թէ ոչ:

**ՃԷ ՌԻԳ**      Հարց.—Թէ յամբարչութեան և յաղտեղու-  
թեան կեցեալ է նոր ի մանկութենէ իւրմէ, և ի  
հիւնդութիւն անկանի. և կոչէ զքահանայս և ասէ,  
տուք ինձ կի՞ կոչ և վկայութիւն դնէ առաջի Աստու-  
ծոյ, և ասէ՝ եթէ ապրեցայց աստի յառաջ սրբու-  
թեամբ կեցից, և քահանայքն ըստ վկայութեան նո-  
րա՝ տան նմա կի՞ ք, և նա յորժամ յառնէ ի հիւն-  
դութենէն՝ դարձեալ ի նոյն աղտեղութիւն տայ  
զանձն իւր, և յորժամ հասանէ ի վերայ նորա ախտ  
մահու, և դարձեալ խնդրէ օրէնս, պարտ է տալ  
թէ ոչ:

**Քարոզի Բ.**      **ԱՄ ՀԺԴ**      Պատաս.—Պարտ է տալ:  
Եթէ ոք անարժանութեամբ յօրէնս մատչի,  
հանդիպի նոցա այսահարութիւն, գողութիւն, պի-  
սակութիւն, մուրացութիւն, աղքատութիւն, պա-  
տահարք ամենայն չարեաց՝ հանդիպին իւրեանց, և  
որդւոց իւրեանց, և որպէս հուր կիզու զամենայն  
ինչս նոցա:

**ՃԺԸ ՀՂԳ**      Այր կամ կին, որ սրբութեամբ են՝ արժան է  
ի սուրբ խորհուրդն մերձենալ, աւաս եթէ անապաշ-  
խար են և անսուրը, մի խշիսցեն, և եթէ յանդդ-  
նի ոք, ընդ խաչանանունսն Քրիստոսի, և ընդ ա-  
նամօթիւն յուղայի եղիցի:

**ՃԺԸ ՀՂԳ**      Կին տեռատես կամ ծննդական մի խշիսցէ  
մերձենալ ի սուրբ խորհուրդ և յեկեղեցի, մինչև  
սրբեսցի, եթէ ոք յանդգնի, նզովեալ եղիցի:

Ճի չղե Կին յդի ի սուրբ անկողնոյ՝ մտցէ ի սուրբ եկեղեցի, և համարձակ ի սուրբ խորհուրդն մերձեսցի անխտիր։

Ճկը պինդ Եւ ի դրաց օրէնս մի տացի աշխարհականաց, բայց եթէ յետին թոշակ, և տղայոց՝ որ հիւանդ են, եթէ ոք յանդգնի, եղիցի ընդ խաչանանունն։

Ներսիս Ածք Եւ մնձի շարաթու ճրագալուցին՝ թէ մշակք, և ու թէ տղաքը, թէ ծերք, ի տունջեան՝ օրինաց մի հաղորդեսցին, ապա եթէ իցէ ոք՝ որ հաղորդեսցի վասն ակարութեան մարմոյն, թան, և գինի մի իշխանացեն ճաշակել՝ ցժամն կատարելոյ սրբոյ պատարագին։

Ներսիս Բ. Վասն այնոցիկ՝ որք չեն արժանի հաղորդութեան, յետին ժամանակն առցեն հիւանդք, և եթէ ողջասցին, զկարգ կատարեսցեն ըստ մեղանացն, ըստ հրամանի կանսնաց։

Եղիփանոս Բ. Դանոնական խրատ առ սրբազնագործ պաշտ առ կը

Ի վերայ բազում նշանացն և մարգարէութեան ցըն, և այս չնորհեալ երանելոյն նպիֆանու։ — Զի յորժամ պատարագ կամէր մատուցանել յառաջին աղօթ, սըն իւր, զոր վասն արժանաւոր լինելոյ զանձն իւր աղաչէր, վասն իջեց սուրբ Հոգւոյն և սուրբ խորհուրդն, որ ի վերայ սրբոյ սեղանոյն. և տեսանէր յայտնապէս՝ զնոպին սուրբ իջեալ և սեղանն սուրբ, և յամենայն կիւանս իւր՝ ոչ երբէք կատարէր զիսորհուրդ պատարագին, եթէ ոչ իջեալ և հանգուցեալ տեսանէր զնորհն Հոգւոյն սրբոյ ի պատարագն։ — Եւ եղեւ օր մի ի կալ նորա՝ առաջի սրբոյ սեղանոյն, և ասել զբանս աղօթից ըստ սովորութեան իւրոյ առ Աստուած, զի իջցէ հոգին և կատարեսցէ զնորհուրդ սրբոյ պատարագին, և յայնժամ երևումն տեսիւան սուրբ Հոգւոյն՝ ոչ եղեւ ըստ սովորութեանն, որպէս յերեկն և յեռանդն. և զարհուրեալ դողութեամբ ուժգին, արտասուօք և հառաջանօք երիցս անգամ կրկնեաց զբանս աղաչանաց, և եղեւ երեւումն չնորհաց Հոգւոյն սրբոյ. իսկ երանելին կայր զարհուրեալ՝ և ողբալով աղաչէր՝ յայտնել զպատճառօն լինել ընդունելի աղօթից նորա՝ վասն իջեց Հոգւոյն սրբոյ, և հայեցեալ նորա ի ձախակողմն կոյս ի սարկաւագն, որ զքչոց պատարագին ունէր, և տեսանէր զճակատ նորա լի չարաչար բորսութեամբ, որ յառաջադոյն սուրբ էր ի բորսութեանէ. իսկ երանելին նպիֆան, ձգեաց զձեռն իւր և փու-

թապէս ի բաց առ գքչոցն ի նմանէ, և ասէ ցնա  
հեղութեամբ, Կըթ որդեակ, գնայ ի տուն քո և  
մի ճաշակեր այսօր յաստուածային խորհրդոյն. և  
սարկաւագն ել արտաքս և գնաց ի տուն իւր, և  
հրամայեաց երանելին՝ զքչոցն այլում սարկաւագի  
սպասաւորել պրոյ խորհրդոյն, և ապա սկիզբն ա-  
րարիտ նորա՝ Աստուածային բանից պատարագին  
ուժգին արտասուօք, և նոյն ժամայն ետես զՀողին  
սուրբ ի վերայ Աստուածային խորհրդոյն ի սեղանն  
սրբութեան, անարատ գտուինն՝ փառակցին իւրոյ:  
— Նև զինի որձակելոյ խորհրդոյն, կոչեաց առ  
ինքն զսարկաւագն և ասէ՝ կամիմ ուսանիլ զպատ-  
ճառս իրացն, որ եղեն ի քեզ՝ որդեակ, նա պա-  
տասխանի արարեալ ասէ ցերանելին, ի գիշերիս  
յայսիկ մերձեցոյ ի կին իմ, և յանդգնեալ ի սպա-  
սաւորութիւն սուրբ խորհրդոյս, զայս կրեցի:—  
Յայնժամ հրամայեաց կոչել զամենայն երիցունս, և  
զսարկաւագունս. և ասէ ցնոսա. որդեակք իմ որք  
արժանիդ եղէք սպասաւորութեան սուրբ խորհրդ.  
դեանն, ի բաց արարէք զմարմնասիրութիւն ան-  
ձանց ձերց. զի մի յանցանիցէք զնոքօք, և արհա-  
մարհեցէք զհրաման մեծին քարոզի, որ պաղակէ  
և ասէ, որ ունիցին կանայս, որպէս թէ՝ չունիցին,  
այնպէս կալցին, ցմեծ մարգարէն Մոլուս ասէք  
Աստուած, թէ ի սպասաւորութիւն կոչեցար, լոյժ  
ի բաց ընկեան զնողաթափս յոտից քոց; որ է մեռե-  
լութեան գործք. զի սպասաւորութիւնք յոր կոչե-  
ցար՝ սուրբ է:— Նև յայնմեատէ ոչ մարմնաւոր հեշ-  
տութեանց պարապեաց մարգարէն, այլ բանին  
սպասաւորութեան, ի հուուն՝ որք կամէին ի սպա-  
սաւորութիւն խորանին մերձենալ. զերիս աւուրս  
ի կանանց զգուշանային. որչափ պարտ է ի նորումս.  
սոյնպէս և յորժամ կամիմք հաղորդիլ մեղսաքաւիչ  
խորհրդոյն, թէպէտ և կարսոր է. կերակուրն քան  
զանկողնոցն ցանկութիւն, սակայն զգիշերն ընդ  
մէջ անցուցանեմք, այլ և ի սուրբ կերակուրս և  
յըմպէլս՝ որք յանդգնարմը մերձենան, մինչև ա-  
նառակ արբենալ ի մեղս ևս համարիմք նոցա, ոչ  
եթէ զգինին, այլ զանառակ և զյանդուզն ցանկու-  
թիւն նոցա. զի վասն հացին առաջաւորութեան՝  
առէք քանանայն ցԴաւիթ, թէ զգուշացեալ են ման-  
կունքդ քո ի կանանց՝ կերիցեն, ասէ Դաւիթ՝ սուրբ  
են յերեկէ և յեռանդէ, յորմէ հետէ ելաք ի ճանա-  
պարհ. և ապա հրամայեաց. ահա որ ինչ բնութեամբ  
բարի է, յանդգնութիւն պիղծ առնէ, և ան եթէ  
գրնութիւնն, այլ զյանդուզն և զանժամն ասեմ:—

Արդ՝ որք արժանաւորեցաք Աստուածային խոր-  
հրդոյն՝ մեծաւ երկիւղիւ զգուշացարուք, բազուք  
երկիւղիւ զանձինս ձեր արժանացուցանել՝ կալ տ-  
ռաջի սեղանոյն, և հաղորդել մարմնոյ և արեան  
Տեառն:

Սահակոս Գեր- Հարց.—Եթէ արժան է բորոտի և ուրկի ի  
Ըսոյ սուրբ խորհրդոյն ճաշակել, եթէ վասն ախտին ոչ  
ո ոճնդ մերձենալ, թէ և սուրբ իցէ:

Պատաս.—Թէ սուրբ է՝ պարտ է համարձակ  
մերձենալ, զի գարշելի հաղորդութեան ոչ ախտա-  
ւոր մարմինն է, այլ պղծեալ մեղք հոգին և մարմին:

Թ ոճնէ Հարց.—Զհացն մատուցեալ՝ սրբեալ և եղեակ  
մարմին Աստուծոյ, արժան է՝ պահել զգուշութեամբ՝  
ասրւոյ ի տարի ի պահարանս, զոր և առնեն իսկ. կամ  
թէ ևս առաւել ժամանակս, թէ ոչ:

Պատաս.—Զէ պարտ, բայց ի կիւրակէէ ի կիւ-  
րակէ, կամ ի խորհրդոյ ի խորհուրդ, այլ աւելի ոչ:

Հարց.—Քահանայ՝ յորժամ արտաքսյ եկեղեց-  
ւոյ հարկաւորի զինորհուրդն տալ, կամ արգելա-  
կանաց, կամ հիւանդաց, արժան է զնաշակմանն,  
կամ յետոյ զգոնութեան աղօթսն մատուցողին՝ այսոքիկ պատշաճին  
թէ ոչ:

Պատաս.—Ասել պարտ է զնաշակմանն:

Հարց.—Քահանայ՝ որ սիւնական է կամ խը-  
շարգել, զսուրբ խորհուրդն խնդրէ առ ի հաղոր-  
դել, արժան է՝ իւրովք կատարել զնաղորդութեան և  
զգոնանալոյն աղօթս յարգելանի անդ կամ ի սիւն, ե-  
թէ նորին իսկ մատուցողին՝ այսոքիկ պատշաճին  
զնաշակմանն:

Պատաս.—Պարտ է ասել՝ զգոնութիւն ա-  
սացեալ է:

Վիօնի Կաթո- Քահանայք մի իշխանութեան զնշխար կենաց հա-  
ղիսոնի մանկանց կամ զինուորաց տալ առնել, այլ ին-  
քեանք արացեն, և ի սրբութեան բաժակն բաւա-  
կան արկցեն զբաժակին, և մի խառնեցեն այլ զի-  
նի յետոյ:

Ներուի Շոր- Եթէ մուկն տանի ի խորհրդանոցէն, ուր ոչ  
հաւաս էր սերտ և ամուր եղեալ, այլ անզգոյշ, գ. ամ ա-  
պաշխարեսցէ, և զգուշացի, զի այլ մի լիցի, ապա-  
թէ, այլ հանդիպի, լուծցի, և վարդապետն յառա-  
ջին ի ջերմ ապաշխարութիւն հայելով, յետ միոց  
ամին՝ հրաման տացէ ժամ առնել, այլ զապաշխա-  
րութիւն երից ամացն ի զլովս տարցի:

Թէ հիւանդն յետ հաղորդելոյն դարձուցանէ,  
պարտ է մաքրել և արտաքսյ ի հիմն եկեղեցւոյն

թաղել, և թէ հիւանդն ողջանայ, խ. օր ապաշխարսցէ:

I Այդա

Նթէ ի խորհրդոյն կաթէ ի հանդերձս սեղանոյն, մաքրել պարտ է, և ոչ կտրել. զի մի է համարեալ անօթքն և ծածկոյթք. իսկ եթէ յիւր հանդերձն, կտրել պարտ է, և ի ծերպս եկեղեցւոյն պահել. և թէ միւռոն կաթէ յիւր հանդերձն՝ նոյն պէս արասցէ:

II Այդա. Ասեն թէ քահանայ՝ որ հիւանդին հաղորդ տայ, չէ պարտ ի նմինաւուր ժամ առնել, բայց ոչ է պարտ խափանել, եթէ պատրաստեալ էր ժամու, զի այն չէր մատուցումն, այլ զմատուցեալն ետ հիւանդին. և գրոց ընթերցմունքն և աղօթից վասն արժանաւորութեան հիւանդին, և գոհութեան և ճաշականն վասն անմատոյց բաժակին.

III Այձա

Նթէ մինչ ի սեղանն հանէ զխորհուրդն՝ և ճապաղէ, ժամ մի արասցէ, այլ Գ, օր կարդ ածցէ, և ապս դարձեալ զգուշութեամբ մերձեսցի, ապս թէ մեծ հարկ կայ մատու, և տօն է, և ժողովք օր հաղորդին՝ մատուսցէ. բայց յետոյ՝ Ժ. օր կարդ ածցէ, իսկ պատարագին առաջին աղօթքն ասացեալ ինի զԾէր Աստուածն, և յայնժամ լինի, մի մատուսցէ՝ այլ լոկ ճաշակեսցէ, և իե, օր կարդ ածցէ, Ժ. առտաքոյ և զայլն ի ներքս. ապս թէ ի տգիտութենէ կտմ յաներկիւլութենէ յանդգնի և մատուսցէ, ամ մի ապաշխարեսցէ պահօք և աղօթիւք. իսկ եթէ անաի և յառաջ լինի, յայլ աղօթանին պատարագն մատուցեալ է, և վասն այնը կարդ ապաշխարութեան այն է՝ որ վերադայնդ գրեցաւ, թէ ի վերայ սեղանոյն իցէ, թէ յատակս բեմին և այլն:

IV Այդե

Պարտ է զհաղորդն վախսել յամենայն կիւրակէ, և զպահեալն ճաշակել՝ յետ կտտարման խորհրդոյն, և մի զիցէ ի սեղանն կամ ի սկին յառաջագոյն, մինչև աւարտէ զխորհուրդն. ապս թէ մոռացաւ, և յանմատոյց բաժակ մերձեցաւ, մի ճաշակեսէ, այլ պահեսցէ:

V Այդթ

Նթէ վախճան հասցէ ի տեղուդ, ուր ոչ իցէ հայերեց մի առցէ հաղորդ ի հոռոմէ, կամ յասորւոյ, կամ ի վրաց, կամ յայլ հերձուածողաց, չունի վըտանգ՝ թէ անհաղորդ մեռձեցաւ.

Ժա Ածժք

Որ հիւանդի հաղորդ տայ, պարտ է կարդալ նախ զկարդն, և ապս զճաշակմանն աղօթան ասել և տալ. իսկ եթէ ի մահ մերձեալ է, պարտ է միայն զճաշակմանն ասել և տալ փութով, և ապս կարդալ, և զկնի՝ զգոհութեանն ասել.

**ծը ոնժթ** նթէ ոք դև ունի, և սուրբ է կեցեալ ի կարգի  
և չէ սրբեալ յայսոյն, չէ արժան հաղորդ տալ՝ բայց  
մերձ ի վախճանն առցէ, և թէ անկնիք է զիւահարն,  
ի վախճանին աւուր կնքել արժան է:

**ծթ ոնի** նթէ ոք ի վախճանի աւուր ոչ խոստովանի, և  
ոչ ոք վկայ լինի կենաց նորա և հաւատոց, ոչ է  
պարտ հաղորդ տալ նմա, կամ ժամ առնել, այլ մի-  
այն ողորմութեամբ աղքատոց, և ամբծօք և հոգե-  
հանգստի յիշատակիսցի:

**բ. ժողովուն** Զհաղորդն առանց բուրգառի և մոմեղենի մի  
Սայ տարցեն առ հիւանդն, այլ մեծաւ երկիւղիւ: Իսկ  
Ժդ Ժդ ժողովուրդը չեն յիւրեանց հրաման, ում կամին ծուլ-  
. լինել, այլ որպէս եպիսկոպոսն հրամայեսցէ:

**Անանիայի Հայոց վարդապետի ընդդէմ յու-  
նաց, որ վասն յանախ հաղորդելոյ:**

**ա ոչժր** Օքդ՝ եթէ զմահն՝ մարդոյ համարիք, և մար-  
մինն՝ որ չարչարիցաւ և մեռաւ, մարդոյ մարդին է՝  
ապա յիւրաւի անխտիր բաշխէք յանցաւորաց. զի թէ  
աստուծոյ է մարմինն, զոր բաշխէք, ապա ամենենքեան-  
աստուածապան էք և պարտական արեանն տիհ-  
ուն. ըստ առաքելոյ սահմանին, թէ՝ որ ուտէ  
անարժանութեամբ պարտական եղ' ցի մարմնոյ և  
արեանն տեառն, զի որ ուտէ և ըմպէ անխտիր ա-  
նարժան գործովք, դատաստան անձին իւրօմ ու-  
տէ և ըմպէ. ապա ուրեմն վճիռ դատաստանի մա-  
հու հասանի ի վերայ ձեր. զի դուք ինքնին վկա-  
յէք, որ ի մեղս անխտիր էք, և ի հաղորդելն ան-  
զեղջ. զի և հարկ ի վերայ դնէք, թէ որ յաւադ  
հինգշարաթւոյն ոչ հաղորդի ի բաց հանէք ի հաւա-  
տոց ձերոց, և գիտէք ճշմարտութեամբ. զի ոչ ա-  
մենքեան սուրբ և արժանաւորք են. և ոչ գիտեմ,  
ուստի ուսայք զանխտիր հաղորդելն. զի առա-  
քեալք և ուռը վարդապետք՝ յոյժ զդուշացուցանեն  
մաքրութեամբ հաղորդել. այլ և Յովհան Ուկիերե-  
րան ի բազում տեղիս զգուշացուցանէ ահիւ և  
սրբութեամբ հաղորդի, առաւել յառաքելոյ մեկ-  
նութեանն ի կորնթացւոց թղթին, յայն բանին,  
թէ՝ որ ուտէ և ըմպէ զբաժակ տեառն անար-  
ժանութեամբ՝ պարտական եղիցի մարմնոյ և ա-  
րեանն տեառն. ընդէք ասէ, զորօրինակ յայնժամ  
խոցեցին, ոչ զի կերիցեն, այլ զի հեղցեն անարդա-  
րամբ, նոյնավէս և որք աստ անարժանութեամբ մերձե-  
նան, ոչինչ շահին, այլ դատապարտին, և ոչ զի շնորհօք  
տուաւ մեղ, անարդանօք և թշնամանօք ուտիցեմք

անսըրաբար, և ի սմին բանի՝ որ ասէ՝ տէր Ափ-  
րեմ, զի որպէս որ ոչ հաղորդի և կցորդի ընդ խոր-  
հուրդս ընդ այս, չիք նորա կեանք, և որ ուտէ և  
ըմպէ յանարժանն՝ դատապարուեալ և պարտական է  
արեանն Տեառն։— Եւ ձգի այս ի վերայ ամենայն  
տարւոյ և ի վերայ ամենայն ազգաց, փորձեսցէ մարդ  
զանձն իւր ինքն առանձինն, եթէ վկայէ խիղճ մը-  
տաց իւրօց, թէ սուրբ իցէ և մաքուը յամենայն մե-  
ղաց՝ առցէ, ապա թէ ոչ՝ մի հպիսցի ի դատապարտու-  
թիւն իսկ մեք ասէ հիւանդուք մարմնոյ ցանկութեամբ  
և բարկութեամբ, զորս պարտ է ասէ զբոլորն ի բաց  
մաքրել, և ապա հաղորդիլ ի սուրբ խորհրդոյն, մի  
պղերգութեամբ այլ երկիւղածութեամբ, զինչ ունիս,  
որ այդչափ բարեաց պատճառ է, և զկեանս բաշխէ  
մեզ ամենայն, նա դատող լիցի, այս ասէ, ոչ վասն  
իւրօց բնութեանն, այլ յաղագն անարժանիցն հաղոր-  
դելոյ, որպէս գալուստն Քրիստոսի՝ անհաւատիցն  
ի դատապարտութիւն։ նոյնպէս սեղանն այն անար-  
ժանիցն մահու է ի դատապարտութիւն։ և ընդէր  
դատաստանն իւր ուտէ, զի ոչ հարձավորձեալքննէ,  
թէ որպէս պարտ է զմեծութիւն պարզեացն ընդու-  
նելի զօր պարա է յոյժ մաքրութեամբ ընդունել. իբ-  
րև զմարմինն, զի և ի նոցանէ բազումք մատեան  
անարժան և տարաժամ սատակեցան։— Եւ դարձեալ  
յերբայեցւոց թղթին ասէ, յայն բանին մեկնութեան,  
որ ասէ՝ որչափ ևս առաւել պատժոց արժանի են,  
որ զորդին Աստուծոյ առ ոտն հարկանեն, և զա-  
րիւն նորոյ ուխտին խառնակ համարեցան, և զիմբրդ  
հարկանիցէ ոք առ ոտն զորդին Աստուծոյ, յորժամ  
խորհրդոյն ահազին և հաղորդոյն յետոյ՝ ի մեզս  
անկանիցին. ոչ ապաքէն առ ոտն եհար զնա և ար-  
համարհեաց. որպէս՝ զօր ինչ առ ոտն կոխիցեմք,  
չհամարիցիմք ինչ նոյնպէս որ մեղանցենն՝ չհամա-  
րին ինչ զՔրիստոս. և այնպէս աներկիւղ հաղոր-  
դին։— Եւ ածէ առաքեալ ի վկայութիւն բանից իւ-  
րօց ի մարգարէէ անտի, որ ասաց յերեսաց  
Տեառն, թէ իմ է վրէժինդրութիւն և դատի տէր ի  
ժողովուրդ իւր, որք անարժանութեամբ անխտիր  
հաղորդին, ան մեծ է անկանիլ ի ձեռս Աստուծոյ  
կենդանւոյ՝ արհամարհողացն զնա։— Եւ արդ՝ եթէ  
այս ամենայն վկայութիւն գրոց սրբոց՝ և ձերոց  
վարդապետացն են, ուստի այնպէս անխտիր հա-  
ղորդեցուցանել անարժան ժողովրդեանդ ձերոյ,  
մանաւանդ յաւուր մեծի Հինգշարաթւոջն, որ  
ոչ է ամենեցուն ժողովրդականացն հաղորդիլ,

բայց միայն քահանայիցն, որպէս ուսոյց մեզ  
տէր մեր, զի երկուասանիցն միայն բաշխեաց,  
թէպէտև բազումք գոյին՝ աշակերտեալք և հաւա-  
տացեալք ի նա ի ծածուկ և ի յայտնի, միայն ա-  
շակերտացն ուսուցանէր առնել առ յապայ յետ յա-  
րութեան, զի գեռ չե էր պատարագեալ ի խաչին, և  
ոչ մահ լուծեալ, և ոչ դժոխք աւերեալ, և ոչ  
աղամ ազատեալ, այլ խորհուրդ առ յապայ լինելոց  
իրաց գուշակումն. զի ուսուցանէր աշակերտացն՝  
թէ ոչ հրէիցն է իշխանութիւն պատարագեալ զնա-  
այլ ինքն զինքն մատուցանէ կամաւոր պատարագ  
Հօր ի հոտ անուշից. որպէս ասաց՝ եթէ ես ինձէն  
զանձն իմ սուրբ առնեմ ի վերայ ձեր. և արդ՝ մինչ-  
դեռ պատարագեալ, զիմարդ է հրապարակօրէն  
բաշխել ամեննեցուն. զի սեղանն այն հարսանեաց  
և խնդութեան մեծի է հաղորդութիւն, որպէս ա-  
ռէ տէր նփրեմ եթէ հարսանիք են կերեալ և ար-  
բեալն ընդ նմա սուրբ հոգւովն, ըստ տեառն բանին,  
թէ հարսանիքս պատրաստ են, և պարագեալք զե-  
նեալ, և արդ՝ մինչեւ հզօրն չե է կապեալ, և  
ոչ հարսնն ազատեալ և մաքրեալ, զիմարդ մարթի  
առաջաստին հաղորդի, կամ արժան է յաւուր հինգ-  
շաբաթի տօնախմբութիւն առնել հրապարակօրէն  
և հաղորդիլ զենման չե ևս պատարագելոյն, և անդ-  
րէն դարձեալ ի սուզ սիրութեան մտեալ՝ և ողբա-  
կից լինել ձայնից մարգարէիցն, որը միահամուռ-  
ժողովեալ զողրս աղէտից չարչարանացն Քրիստոսի  
մեծամյն գոչեն, և ամենայն արարածք անըզ-  
դայք ընդ մարգարէիցն ողբակով քրձազգացք լեալ և  
պատմուճանապատառք զերերհարեալ տատանին՝  
խաչակցեալք ընդ Քրիստոսի մեռանին, խատրազգաց-  
եղեալ, և չե ևս աւետիք յարութեան բացափայ-  
լեալ, և ի հրեշտակաց քարոզեալ, դու՛ ում եղիր  
տօնակից և զուարճահաղորդ, մինչ ամենայն ա-  
րարածք ի խոր տխրութեան, վերինք և ներքինք,  
զի չե ևս արրեալ տեառն զբաժակ մահու, և ոչ մահ-  
լուծեալ, զիարդ մարթի տօնախմբութիւն առնել մեզ,  
զի փեսայն չե ևս է մտեալ յառազաստն, և ոչ ի խա-  
չին պսակեալ՝ ըստ Սողոմոնի գուշակելոյն, իսկ աս-  
տուածաբան յայտնի ուսուցանէ մեզ ի մկրտութեան  
նառին ասելով, դարձեալ ի խորհուրդ ածէ ի տօնին-  
զաշակերտուն ի վերնատանն և յետ լնթրեացն, և  
նախքան զմի օր չարչարանացն, բայց ի մեզ տունս-  
աղօթից, և նախ քան զընթրիսն. և զինի յարու-  
թեան, ահա ի տունս աղօթից, ասաց և ոչ ի հա-

դորդութիւն խորհրդոյն, այլ յորժամ աւետաքարոզ  
հրեշտակն երևեցաւ կանանցն, յայնժամ լուծաւ խա-  
ւար մեղացն. որպէս ասաց ի պահու իմում ճառին  
յասկեն թէ՝ մեզ գառն զենցի ընդ երեկու. վասն զի-  
վախճան յաւիտենիցն՝ Քրիստոսի չարչարանօք հա-  
ւասար է խորհրդոյն աշակերտացն երեկորին լուծա-  
նելով զիսաւար մեղացն յորում պարտ է մեզ հաղոր-  
դել ճշմարիս գառինն պատարագելոյ, և լինել ա-  
մետաքարոզ յարութեանն նորա բացածագելոյ ի մեզ  
զնառագայթ յարութեանն, որ լուսափայլեալը ազա-  
տեցաք յեղիպտական խաւարէն, և ի դառն գործա  
ւորացն, և ոչ ոք ի չար զօրութեանց որ կարէ արգե-  
լու զմեզ՝ զան տօնել ելիցն յաշխարհէ աստի չարէ-  
առ վերինն փոխիլ յաշխարհ. — Եւ արդ՝ պարտ է մեզ՝  
ուսանել ի տեսանէ բանէն, որ ասաց, ոչ ոք ար  
կանէ զինի նոր ի տիկս հինս, ոչ ահա բացայայտ-  
ցուցանէ զնութիւն բնութեանն՝ ոչ զօրելով տա-  
նել զանապական բաժակն տեսառն, մինչև իցէ նո-  
րութեալ մկրտութեամբ, մանաւանդ թէ՝ յերկրոր-  
դումն նոր կիւրակէին՝ յորժամ զիսորհուրդ խաչին  
եցոյց Թովմայի՝ ելից հաւատովք զանհաւատութիւնն  
Թովմայի, և փչեալ յառաքեալոն՝ ելից հոգւով ոըր  
բով, և նորոգեաց յառաջին բնութիւնն անմեղ ւ-  
թեան Աղամայ. — Իսկ եթէ ասից՝ առաքելոցն ըն-  
դէր բաշխեաց զնոր բաժակն, զի ոչ էին նորոգեալ-  
ասացից առ այդ. զի վասն նոցա տէրն վկայեաց,  
թէ՝ ոուք սուրբ էք վասն բանին՝ որ խօսեցայ ընդ-  
ձեզ. վասն որոյ և ոչ պէսք եղեն նոցա մկրտիլ  
ջրով. զի և զմկրտութեան ջուրն՝ բանն սրբելով  
մաքրեմք, և եթէ նորա բանիքն մաքրեցան և նո-  
րոգեցան, չէին պէտք ջրով մաքրութեան. վասն ո-  
րոյ և կարող էին ընդունել զրաժակն զօրութեամբ  
նորոգութեամբ բանին. իսկ եթէ ասիցես՝ եթէ մեզ  
նոր մկրտելոցս բաշխեմք, և ոչ հնոց մարդոցն, ա-  
սացից ևս առ այդ. ընդէր բնաւ առնես յիշատակ  
հնոցն տօնիցն և բաղարջակերաց՝ յաւուր հինգչարա-  
թին, կամ, զինչ պիտոյ է զՔրիստոսի չարչարանն  
վերսախին յիշատակել, և առաջի աշաց նկատել զձա-  
զանս և զնախսատինս խաչին. Եւ արդ՝ ի միտ առ-  
իմաստարար, զի որպէս ի հնումն նկարագրէր նորս՝  
և ծածկաբար ի ստուերին բացափայլէր ճշմարտու-  
թեանս խօրհուրդ, իբրև ընդ հայելի տեսանէին  
զայժմուա մաքրեալն մտօք. նոյնպէս պարտ և ար-  
ժան է, և զհնոյն յիշատակ՝ ընդ նորոյս շարայարել-  
զի յայտ լիցի՝ զմի և զնոյն խօրհուրդ տպաւորել

ի միոյն Աստուծոյ զմեր փրկութիւն։ Եւ արդ՝ եթէ  
 յայնմ աւուր զամենայն ի միասին գումարեմք զին  
 և զնոր խորհուրդ միացուցանելով որպէս տէրն արար  
 հնոյն վախճան և նորոյս սկիզբն, և մեք որպէս զա-  
 մենայն պահնմք՝ զամենայն օրինակն նոյնպէս և  
 զայս խորհուրդ ի յարութեան անդ կատարեմք զնոր  
 արբումն ի նոր արքայութեան՝ յարութեամբն նո.  
 բոգեալը. և արդ՝ չեն ինչ պէտք առ այդ ասել ինչ  
 ձեղ, զի եթէ ապականացու խոստովանիմք զմար-  
 մինն Տեսուն, յիրաւի ապականեալ միշտ մեղօք՝ յա-  
 պականացու մարմինն հաղորդիմք, ապա ուրեմն և  
 զնա ընդ հին մեղօք անկեալ խոստովանիմք. զի ա-  
 պականութիւն՝ հին մեղացն է ծնունդ, և արդ՝ ա-  
 պականացու կերակոր զիմք կերողացն կեանս  
 չնորհէ, ոչ գիտէք՝ եթէ ապականացու կերակոր  
 ընդ որս շարախառնի ունակութիւն բնութեանն.  
 Եւ արդ՝ եթէ ընդդիմաբանէք զմեղ, ի Սովորատայ  
 պատմութենէն առնլով վկայութիւնն, յոր աւուր հինգ-  
 շաբաթու յետ ընթեացն՝ ոչ ամենայն աշխարհի,  
 որ թէ ոմանք տղիսառութեամք հաղորդին՝ և մեք  
 այնմ չեմք անտեղեակ, բայց իմա, զի մինչ ի նիկի-  
 ական ժողովն՝ ոչ էր կարգ եկեղեցւոյ հաստատեալ,  
 և թէ արդարի ուղիղ ունէին զամենայն կարգս՝ ոչ  
 փոխէին զառաջինսն. իսկ եթէ ի հոգւոյն շարժեալք  
 հաստատեցին զամենայն կարգս ի սուրբ աւուր  
 հինգշաբաթին հաղորդել ժողովրդականաց, և ոչ ջուր  
 և քացան և նմոր՝ աւանդեցին ի սուրբ խորհուրդն  
 և կիր արկանել. և սուրբն Գրիգոր ոչ աւանդեաց  
 մեզ զայդոսիկ, և ոչ սուրբն Ներսէս ի ժողովոյն ի  
 Կ. Պօլիս, որ ի քակտումն հոգեմարտին Մակեդոնի  
 ժողովեցան, և ոչ սուրբն Սահակ ընկալաւ յնիկ.  
 սոսի ժողովոյն՝ որ ընդդէմ նեստորի գումարեցաւ,  
 ի սրբոյն Կիւրդէ Աղքասանդրացւոյ ընկալեալ զհա-  
 ւատոյ նամակ, զի սուրբն Կիւրեղ՝ ոչ ի պարապ-  
 մանց գիրքն յիշէ զայդոսիկ և ոչ ի գանձուն, զոր  
 ունիմք հիմն հաւատոյ, և յայդմ վերայ հաստատեալ  
 է հիմն հաւատոց մերոց, յայդց երից սուրբ ժո-  
 ղովոց ոչ կարեք յայտնել, թէ սահմանեցին ուրեք  
 կանոնական սահմանօք՝ քացախ և ջուր ի սուրբ  
 խորհուրդն խառնել և ոչ նմոր և մեք այդմ եմք հաս-  
 տատեալ, և ոչ յաւելու ունիմք հրաման, և ոչ պա-  
 կասեցուցանել, և զի՞աղկեդոնի զաւելորդ հրամանսն  
 ոչ ընդունիմք:

Ե.

**ՅԱՂԱԳՍ ՍԵՐՄՆԵՐԹՈՒԹՅԱՆ, ԼՐԱԶԱԿԱՆ ԳԻՃՈՒԹՅԱՆ ԵՒ-  
ԱԿԱՆԱՑ**

**Հարց հետեւ.** Սերմներթութիւնք ի քունս, է որ խոտեսցի,  
այս է որ ոչ, և է այլաշարժութիւնք բազումք, է որ յոյժ  
իդ ճկը ի գիրութենէ է, և է որ ի լազութենէ է, և յոյժ  
այն է՝ որ ի կրօնիցն լազութենէ է. քանզի որ ի  
գիրութիւնէ է, նախ մեղք գիրութիւնքն են, և ապա  
տարածամ հոսութիւնքն, այնպիսոյն վասն երկուց  
տանտիցն պատկառել պարտ է՝ յահագին խորհրդոյն,  
մինչ յերիս աւուրս. զդոյն կանոնեցաք և արբեցե-  
լոցն, որ զնոյն գիջական: Խոկ այլ է՝ որ գոլացու-  
ցանէ յինքեան և եւացուցանէ յորդոր մտօք. և ու-  
րեք հայելով լիկ զմարմին, և զարիւն հոսեցուցա-  
նէ, կանոնեցաք նմա զպունկին զապաշխարանս.  
զի որպէս նա այլով մարմնով, և սա իւրովն զնոյն  
գարշութիւնս գրգուցուցանէ: Խոկ որ ոչ գերք և  
ոչ արբեալք, այլ ի քնոյ թուլացեալք, հոսեցեն,  
զաւածամայն հառաջութիւնս և զաղոթս մատուցա-  
նեն, և զանձինս ի սրբութենէ մի զրկեսցէն, և ե-  
թէ ի կրօնից լազութենէ կամ յախտիցն հոսեցի ի  
քուն, զնոյն հառաջութիւնս առնել, բարւոք երկիւ-  
զածութիւն է. բայց զանձն մի զրկեսցէ և զատուս-  
ցէ ի սրբութենէ:

**Թագէսոփ** **»** Դարձեալ ասէ առաքեալն՝ թէ ոք անժուժկա-  
**ռաբ.** լարան լիկ զինքն և հոսումն արասցէ մարմնոյն,  
ի նձեւ պիղծ է այնպիսին, ընդ շնացողս ապաշխարեսցէ,  
և եթէ յաւելեալ իցէ ի գործն, կրկին ապաշխարես-  
ցէ, և այնպիսիքն ձեռնադրութեան մի լիցին ար-  
ժանի:

**Աթանասի** **»** Հարց. — Թէ ալխարհական ոք լինի յերազս,  
ժիսէ և հարցանէ զվիճակեալն, թէ պարտ է նմա հաղոր-  
դին թէ ոչ:

**Պատաս.** — Թէ կացցէ ընդ ախտիւ կնոջ ցան-  
կութեան՝ ոչ է պարտ. ապա եթէ սատանայ փորձէ  
զնա, ի ձեռն այլոց պատճառաց. զի օտարացուցէ  
զնա յԱստուածային հաղորդութենէ՝ պարտ է հա-  
ղորդել. ապա թէ ոչ, և ոչ ևս դադարէ փորձին.  
յանմ ժամանակի, յորժամ պարտ է նմա հաղորդին.  
ի նոյն ախտ անկանի:

**Բարողի Բ.** **»** Սերմներթութիւնք ի քունն՝ է որ խոտելի է,  
լե չժ և է որ անմեղադրելի, զի եթէ ի մտի դնէ պոռն-  
կիլ ընդ ումեք, կամ մաքառին ընդ իւրեանց մար-  
մինս, և ապա ընդ քունն անցանս, համարեալ նմա.

ընդ պոռնկին, ապա եթէ յանհոգս առնէ՛ և անցանէ՛, առանց պատժոյ է, զի սովորութիւն է մարմ.. նոյ, և հարկ է անցանիլ.

Աղջկայ կող. Որ հաղորդիլ ի սուրբ խորհրդեանն, և այն օր սաշու ննջէ ի տունջեան՝ և փորձի, եթէ աներկիւղաբար ա ուղ իցէ՛ և հեշտասիրութեամբ, ժր. օր արտաքոյ իցի սրբութեան՝ ծնրադրութեամբ, ապա թէ՛ պատահումն եղե, կամ տղիտութեան, ե. օր՝ ծ. ծնրադրութեամբ, և այլ պատճառք տեսութեան կամ սրտին յօժարութեան, և ամենեցուն կարգն ըստ պատճառին, և ըստ տեսութեան եղիցի ապա եթէ ան. պատճառ իցէ՛ խոստովանիլ միայն արծան է:

Ներսիսի ջնորհ.

Եթէ ոք յարատ հայելով գոլացուցանէ զիսոր. ոյ ոյկե հուրդն և հոսի առանց չօշափման միանգամ, և ոչ էր սովորութիւն, իս. օր կարգ կրեսցէ արտաքոյ եկեղեցւոյ, յաւուրն՝ ճծ, ծունը և կանոն մի. իսկ եթէ կրկնի կամ երեքնի, մի եկեսցէ ի քահանայութիւն. և թէ քահանայ, լուսոցէ ի պատարագէն, իսկ եթէ՛ լոկափնացաւ, և սերմանցութիւն ոչ եղե, շաբաթ մի կարգ է, և թէ սերմախառն լինի, ի. օր, իսկ որ չօշափէ զիւր մարմինն կամ զայլոց, ընդ պոռնիկս ապաշխարեսցէ:

Ե ոյկ

Որ ի ցաւոց լինի սերմակաթ, արտաքոյ կացցէ մինչև սրբեսցի, և եթէ ոչ սրբի, մի մատուցցէ պատարագ, և մի օրէնս առցէ, իսկ եթէ ի յղփութենէ կերակրոց լինի՝ ճնշեսցէ զմարմինն պահօք:

Ժ ոյհ

Որ ի գիշերի անտես հոսի, օր մի ծ. ծունը, և կանոն մի, իսկ որ տեսութեամբ, ծ. ծունը և կանոն մի. իսկ որ յետ գիշերային պաշտամանն ի քուն լինի լուսով՝ և փորձի, կրկնի կարգ է, և ի միւս օրն ժամ մի արասցէ, օր ժամ առնէ՛ և ցեսնին ննջէ՛ և հոսի, թէ հեշտութեամբ ննջեաց, ժե. օր արտաքոյ եկեղեցւոյ կարգ կրեսցէ, յաւուրն ճ. ծունը և կանոն մի. իսկ եթէ յակամայ և ի նստման եղե, ը. օր տեսութեամբ, և դ. օր անտեսն:

Ժ ոյհ

Եթէ ոք աներկիւղութեամբ մտեալ յեկեղեցի ննջէ, և փորձի յերազի, եթէ ի հարկէ՛ և յակամայ եմուտ առ ի չգոյէ տեղոյ, վասն ցրտոյ և անձ. ընոյ, ժե. օր ապաշխարեսցէ. իսկ ի կամաց և առանց վտանգի, և թէ այլ տեղի գոյր, իս. նոյնպէս թէ ուտէ և ըմպէ ոք յեկեղեցւոյ որկորոտութեամբ, կամ արբենայ և փսխէ ևս, իս. օր արտաքոյ մեծա. ջան ապաշխարեսցէ:

Ժ ոյհ

Թէ մազ կամ ճանճ անկանի ի սուրբ խոր. հուրդն, ոչ է պարտ այրել, այլ յանքոյթ տեղւո՞ ի ծերպս եկեղեցւոյն դնել, և զգուշանալ, զի այլ մի լիցի, և անտպաշխար մի առնել: